

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мелікъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Անցեալ նոյեմբեր ամսի 30-ին Կովստայում վախճանված պողպորուչիկ

ՄԻՆԱՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՓԱՆԵԱՆՑԻ

Եղբայրներ՝ Մարգար ու Ռուբէն Փանեանցները խորին վշտով յայտնում են աղգականներին և ծանօթներին, որ ամսիս 14-ին, երբեքարի օր, Քանդոյեան եկեղեցում (Բէալական դպրոցի հանդէպ) կատարվելու է պատարագ և ապա Զոհեման գիտար կը սկսվի առաւօտեան 11 ժամին:

1—1

Ամսիս 12-ին, կիրակի օր, Բամոյեանց եկեղեցում կատարվելու է պատարագ և ապա Զոհեմանգիտար

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահվան եօթներորդ օրը, որի մասին հանգուցեալի մայրը, քոյրերը և եղբայրը յայտնում են աղգականներին և ծանօթներին: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամի 10-ին, իսկ Զոհեմանգիտար կը սկսվի 11-ին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երօղական տոմարը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուր. Օպերային ներկայացումներ. Գաւառական շաւերից մէկը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից.—ՀՈՒՍ. ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ. ԲԱԿԱՆ. Ընթերցողի փառասերը.

ԵՐԵՎԱՆԻ ՏՕՄԱՐԸ

Ինչպէս յայտնի է, երօղական տոմարը տասներկու օր աւելի առաջ է հաշուում ժամանակը, քան մեր արեւելեան հին տօմարը երօղական տոմարը աւելի ուշիւղ է և աւելի է համապատասխանում աստղաբաշխական ճշգրտութեան, քան մերը: Սակայն աւանդութիւնը և սովորութիւնը մինչև այժմ արդէլք են եղել, որ ամենուրեք ընդունվի երօղական ճիշդ տօմարը և այդ պատճառով արեւելեան քրիստոնեաները, որոնք ապրում են Ռուսաստանում,

նու, Թիւրքիայում, Պարսկաստանում մինչև այժմ զեկալարվում են հին տօմարով: Սակայն երկու տօմարի գոյութիւնը գործնական կեանքի մէջ ստեղծում է բազմապիսի անյարմարութիւններ: Այժմ, երբ միջազգային շփումները և ազգերի փոխադարձ յարաբերութիւնները օրից օր աւելի ու աւելի սերտ կերպարանք են ստանում, տարբեր օրացոյցների առաջ բերած անյարմարութիւնները դառնում են այնքան մեծ, որ վնասում են շատ գործերի և պատճառ են լինում բազմաթիւ թիւրիմացութիւնների:

Թաղաւոր Կայսրը Բարեբաղոյն հրովարտակով հասնելով ինն տեղեկ երօղական տօմար մտնելու հարցը քննութեան ենթարկել և ժողովրդական լուսաւորութեան միջնորդի գեղեցիկ հիման վրա, հրամարդ Գիտութիւնների Ակադեմիայում կազմել մի յատուկ յանձնաժողով այդ նշանակաւոր ծանախաժողովի պարագմունքներին կը մասնակցեն մի քանի ակադեմիկոսներ և զանազան վարչութիւնների ներ-

կայացուցիչներ, որոնցից կարող ենք յիշել հոգևոր վարչութեան, զինւորական, Ժողովրդական լուսաւորութեան, ներքին գործերի, արդարադատութեան և ֆինանսների մինիստրութիւնների ներկայացուցիչներին: Նոր տօմար մտնելը պահանջում է նախապատրաստական մեծ գործունէութիւն, որովհետև պետութեան մէջ տարիների ընթացքում տեղի ունեցած բազմաթիւ գործառնութիւններ և պայմանափոխութիւններ կատարված են հին տօմարի հաշուով, ուստի նոր տօմարին անցնելը կարող է առաջ բերել զանազան անձերի և հիմնարկութիւնների համար նպաստաւոր և անպատահան հանգամանքներ, որոնց պատճառով կը ծագեն բազմաթիւ վէճեր և անհամաձայնութիւններ: Ծանախաժողովի կատարելը գործը այդ պատճառով պահանջում է մանրակրկիտ ուսումնասիրութիւններ այն բոլոր դէպքերի վերաբերութեամբ, որոնք կարող են թիւրիմացութիւնների առիթներ դառնալ:

Ծանկալի է, որ յանձնաժողովին աջողվի շուտով աւարտել իր պարագմունքները և առաջիկայ քաններորդ դարից սկսած նոր տօմարը մուտք գործել և արեւելեան քրիստոնեաների օրացոյցի մէջ: Դա ժամանակակից կեանքի պահանջներից մէկն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մի հարց, որի մասին շատ վաղուց են խօսում և որը հասունացել է, ապահարգանքի կնճառ հարցն է: Անցեալ օրը եմք ծանօթացրելք օրէնսդրական այն միջոցների հետ, որոնք նպատակ ունեն փոքր լի շատէ վայելուչ գրութիւն ստեղծել ամուսինների համար, երբ նրանք անկարելի են համարում միմեանց հետ ապրելը: Այդ միջոցների մեծ մասը, ի հարկէ, ձեռնորդ կը լինին, եթէ լուծվէր հիմնական, ամենակարեւոր դրկման—ապահարգանքը: Մինչդեռ այժմ գործի ամբողջ ծանրութիւնը այն հանգամանքի մէջ էր, որ ամուսնութիւնը եկեղեցական խորհուրդ է և, հե-

տեաւոր, միայն հոգևոր դատարաններին էր վերապահված վճիռներ կայացնել ամուսնութիւնը լուծելու մասին: Այժմ հոգևորականութիւնը ինքը զգում է, որ պէտք է փոփոխել օրէնքները, որ կեանքի անողոր պահանջները չէ կարելի մուսաւորութեան տակ, արհամարհել: Սերգեյ ՎԵՏՆԻՔԷՆ՝ ամսագիրը նոյնպէս միացնում է իր ձայնը ամբողջ մամուլի հետ և ասում է, որ ապահարգանքի վերաբերող օրէնսդրութեան մէջ բարեփոխութիւններ մտնելը անհրաժեշտ է: Ապահարգանք խոյարարվում է միայն այն դէպքում, երբ ամուսնիներէն մէկը անհաստատել է: Բայց ուստի կրօնական օրգանք խոստովանում է, որ կան նաև ուրիշ պատճառներ, որոնք նոյնպէս յարգելի են, ինչպէս ամուսնական անհաստատութիւնը: Եւ եթէ ուրիշ երկիրներում ընդունվում են ապահարգանքի ուրիշ շատ առիթներ ևս, պատճառն այն է, որ աւելի լայն բացատրութիւն են տրվում ամուսնութեան մասին Քրիստոսի ասած խօսքերին, բացատրութիւն, որ բառացի մտքով հասկանալուց հետո է և աշխատում է յարմարվել մարդկայն կարեւորներին և պահանջներին նրանց զարգացման զանազան աստիճաններին վրա:

Եթէ այսպիսի եղանակ միանգամից գործադրված է, ինչու չը շարունակել նրան. ինչու չը մտնել օրէնսդրութեան մէջ այնպիսի սրբազորութիւններ, որոնց պահանջում է անողորդ կեանքը և լիցիտում է հասարակական խիղճը:

Կարծիք են յայտնում, որ ապահարգանքի գործը պէտք է խլել հոգևոր դատարանների ձեռքից: Ամսագիրը այդ բանը համարում է իրար հասարակական խղճի բողոք այն հանգամանքի դէմ, որ վճռողները հոգևոր պատճառ ունեցող մարդիկ են և նրանք պիտի ընեն այնպիսի մանրամասնութիւններ, որոնք աշխարհական դատարաններում միայն դժուար չէ իրականացնել մէջ կարող են յայտնի դառնալ: Ասում են, որ այդ անյարմարութիւնից դուրս դալու միակ միջոցն է ապահարգանքի համար խառն դատարաններ հիմնել հոգևոր և աշխարհական պաշտօնեաներից: Բայց կրօնական տօմարը, այդ միջոցն էլ անյարմար է համարում, որովհետև այդպիսի դատարաններում դարձեալ հոգևորականներ պիտի լինեն: Մնում է բաժանել ապահարգանքի գործը հոգևոր և աշխարհական դատարանների մէջ,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՓԱՍՏԵՐԸ

III

Ձը դիտե՛ ով է առաջին անգամ ասել, որ մենք բրօշիւների գրականութիւն ունենք, այսինքն՝ հայկական տպագրութիւնը արտադրում է միայն փոքրիկ ու նիհար տետրակներ: Ընդհանրապէս, մանաւանդ ընթերցողների մեծամասնութեան տեսակէտից, դա ճիշդ է: Բայց վիրտուոթական է այդ դրութիւնը: Հարցրէք գրագէտներին, ինտելիգենտ ժողովրդին, և ամենքը կասեն, որ այն, վիրտուոթական է. մի ամբողջ ժողովուրդ մանր մուշք գրքիկներով է ապրում, մինչդեռ գրական հասարակութիւնը հասարակ հասարակութեամբ է չափվում: Սրբի այդ վիրտուոթական հանգամանքի շնորհիւ է, որ «Բազմապիւլ» իր վերջին համարում ուղղակի ասաց թէ իր ստացած մի քանի գրքիկների մասին չէ ուղում խօսել, քանի որ դրանք փոքրիկ բաներ են:

Այսպիսի տրամաբանութեան հետ ես չեմ կարող համաձայնվել երկու պատճառով: Նախ, որ նիհար տետրակները մեր իրականութեան հարազատ ծնունդներն են. եթէ դուք կարծում էք, թէ ամեն մի աղքատ արժանի է հաստափոր հատորներով հարուստ գրականութեան,—սխալվում էք այն պարզ հետեւողութեամբ, որ փուշ ցանած տեղը վարդ է բուսնում, որ պէտք է լինի հող, որպէս զի ստացվի այն կամ այն պտուղը: Սրբորդը—հարցը ծաւալել մէջ չէ: Ռուսաց գրական աշխարհում այնքան զեղեցիկ անուն վաստակած Վ. Գար-

շինը հասարակ հատորներ գրելու քաղաք երբեք չէ ունեցել, և նրա առաջին գործը, որ մեծ տպագրութիւն, նոյն-իսկ մեծ յուզմունք տալով ընթերցող հասարակութեան մէջ, «Չորս Օր» անունով փոքրիկ պատկերն էր, որ նրա գրականութեան ժողովածուի մէջ դրաւում է ընդհանրապէս 18 ութնամեկ երես: Իսկ աշխարհաշույն չափ Գիւրը—Մուսասանը ճշ շատ անգամ երկու, երեք երեսից բաղկացած, բայց չքնաղ բաներ է տուել, և քանի՜սը...

Այն տուէր շնորհքով գործեր, և, հաւատալիք, մենք շատ և շատ դո՛ս կը լինենք և նիհար տետրակներով: Մեր մէջ նոյն-իսկ ինքուստ արտաքին ունեցող գրողներն ունէին, ինչու միայն բովանդակութեան մասին խօսել: Խոստովանում եմ, ես մի առանձին թուղթիւն ունեմ ժողովուրդ ու զեղեցիկ տպագրութիւնների վերաբերմամբ և այդ պատճառով աւելի ևս ուշադրութիւն դարձրի պ. Գրիգոր Բալասանցի Առաւմաձէ Մեքիս վրա: մի բրօշիւ, որ տրված է Մուսկալում, ունի ճաշկային պոէմա, երկուցանգիւղական—չափական բանաստեղծութիւն, «Երկրորդ փորձ» վերնագրերն են: Հետաքրքրական գրքիկ է, հետաքրքրական ոչ թէ այն հարցի տեսակէտից, թէ որքան աշողված կամ անաշող է այդ գրութեանը,—այ, ինձ չէ էլ հետաքրքրում պ. Բալասանցի մուսան և, եթէ կամենաք, ես չը դիտեմ էլ՝ արդեօք որ և է մուսա գործ ունի պ. Բալասանցի հետ թէ ոչ: Հետաքրքրութիւնը, ինչպէս գիտէք, լոկ ընթերցողը փաստների տեսակէտից կարող է լինել: Տեսնենք:

Ազգային պոէման ունի 66 երես. չը կարծէք, սակայն, թէ պ. Բալասանցի պեղաւոր այնքան ժիր է, որ կարողանայ այդքան տարա-

ծութիւնը առանց շնչապառ դառնալու կամ գոնէ սաթթալու վաղել: Այդ պեղաւոր միայն 30½ երես է տուած, իսկ մնացածը պ. Բալասանցի պատճառը յատկացրել է իր անձին: Իսկ դիտէք ինչ անձ է դա՝ «Առանձնապէս նուիրած լինելով իմ անձը մեր ազգային ժողովրդական համարը գրականութեան ճիւղի ուսումնասիրութեան խնդիրներին, իմ ցանկալի նպատակն է եղել այսպիսի դեղեցիկ փորձերով, տալ հայրենական տղամտիկ գրականութեանը այսպիսի չափական զիւցազնեցութիւններ՝ վերաբերեալ ժողովրդական նիւթերի, որոնց բանաստեղծ եմ եղել ամենամալ Վասպուրականի կողմերում՝ առած Մշոյ բարբառներով (?) երգված նորագոյն և իսկական լոյս սփռող վաւրիաներից, ի հարկէ, ձեռքի տակ ունենալով նաև կողմնակի օժանդակ անհրաժեշտ գրաւոր աղբիւրներ:

Սա արտագրեցի այս անգամ պարբերութիւնը, որպէս զի ընթերցողը ժողովրդական զիւցազնեցութիւններ ստեղծագործողի համար աղօթել, որ նրան այնպիսի մի վաւրեպետ: Սա շատ հարկաւոր է, որովհետև պ. Բալասանցի անունում է, որ ունի չորս թէ հինգ այսպիսի փորձեր էլ և հրատարակ է զգրական աղբիւրներին: Տարաբաղկի նրանց:

Յաւ այդպիսի չէ: Պ. Տեղեկալը թագնվում է հրապարակ են գտլիս հրատարակչները—Ներսէս Առաքնաբեանց, Յ. Թովմասեանց, Հ. Գաւառեանց: Հինգ երեսն էլ այս արժանաւոր արիւմվիրատն է գրաւոր, որպէս զի կեղեք մեր ակաճններն և ուղեղը երեխայական դատողութիւններով, «Բարեկամ» բառի անտեսելի բաշխեցով: Անասելի սրտառուչ են մանաւանդ

այն խնկարկութիւնները, որ անում են հրատարակչները հեղինակի առաջ և ես խորհուրդ կը տամ ընթերցողին՝ նախ քան կարդալը տնայաճառ թաշկինակ վերցնել՝ աչքերը սրելու համար: Ահա հրատարակչները պատմում են թէ ինչպէս Մուշի խնկարկները երգում էին այդ «Վաւրիաները», և խնկարկը «Մեքիս» հետաքրքրութիւնը միւս կողմից գրաւել էր և՛ ինքը, հեղինակը, տեսնելով թէ նա ինչպէս ամենախորին ուշադրութեամբ ակաճն էր գնում հայ աշուղներին երգելիս, առանց ժամանակ կորցնելու երգածները արագութեամբ և իսկութեամբ իր փոքրիկ յուշատետրի (որքան սիրում ամենամանութիւններ, այն էլ նոր գրելով) էջերում արձանագրելով, որպէս զի ընդունված գրական ոճի պարզութեամբ և լեզուական մաքուր արտայայտութեամբ, ամբողջական բանասիրական վերածէ ապագայում: Ձեռն արտասուէքները հեղինակներն են փոխվում, երբ գտլիս են հետեւալ տողերը. «Մեքիս» հեղինակը միշտ դանդաղվել է արդարացի կերպով և ցուցը սրտի, թէ ինչու մենք հայերս էլ չունենք մեր ժողովրդական վէպերը գրական կազմում թեմաք և չափաբերական ձևի՝ հայ բանաստեղծների ձեռքով գրել անելված և մշակված: Ամենատաղիլեական գրութիւնն այն է, որ երեք հրատարակչները կարծում են թէ դիւզացնեցութիւն գրելը (միայն գրելը) Մուշի էր դա՞մա ուտելու պէս հեշտ բան է: Sancta Simplicita!

Այդքան հարաճողից յետոյ, վերջապէս, գտլիս է ինքը, ճաղապիսի պոէման: Անցնենք թիւրթիւր վերջին էջն է, բայց գրել վերջը չէ: Կայ «Յաւաւրած»: Ամենից առաջ դուք կարող եք մի նամակ, որ գրել է պ. Բալասան-

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.